ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ

ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱՅԻՆ

ԱՐՏԵԼԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅՏՆԱՐԿՈՈՊ»-Ի

ԵԵՐԵՎԱՆ 1928

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆԱՅՆԱ-ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԱ-ՅԻՆ .....

..... ԱՐՏԵԼԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

.....արհեստագործական-արտադրողական կոոպերատիվային արտելը հիմնվում է .....
վորի վարչության կենտրոնավայրն է .....
.....

2. Արտելի նպատակն է միացյալ ուժերով կազմակերպված բարելավել իր անդամների նյութական դրությունը և բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակը։

3. 2-րդ կետում հիշված նպատակներն իրագործելու համար արտելը կարող է՝

ա) միացյալ ուժերով արտադրել իր գործվածքները՝ իր նախաձեռնությամբ և պետական հիմնարկությունների, հասարակական ձեռնարկությունների ու մասնավոր անձանց պատվերնե-

բով, թե իր սեփական արհեստանոցներում, արտելի անդամների տներում, և թե արտելի ու պատվիրողների տրամադրության տակ գտնված ձեռնարկություններում։

բ) արհեստանոցից դուրս արտելի անդամների արտադրության անհրաժեշտ վարկեր հատկացնել՝ հատկապես այդ նպատակի համար նշանակված արտելի դրամագլուխներից և նյութերից։

գ) յենթարկել անհրաժեշտ վերամշակության արտադրածը և հում նյութերը։

դ) բանալ պահեստներ՝ նյութերը և գործվածքները վաճառահանելու համար և թղթակցական հարաբերություններ ունենալ կոոպերատիվ, հասարակական և պետական հիմնարկությունների հետ։

ե) ցույց տալ արտելի անդամներին աջակցություն՝ ընակարաններ, հիվանդանոցներ սանատորիաներ և յերեխաների համար դաղութներ և ուրիշ հանրոգուտ հիմնարկություններ հիմնելու գործում։

զ) կատարել անդամների մեջ կուլտուր-կրթական և ցուցադրական աշխատանքներ թե արտելի կողմից կազմակերպված արտադրություններին, այս կամ այն մթերքների վերամշակման և թե ընդհանուր կրթական ասպարեզներում։

4. Արտելը վայելում է իրավական անձի բոլոր իրավունքները։

5. Արտելն ունի իր անվանական կնիքը։

6. Արտելը պատասխանատու է իր ամբողջ գույքով իր ստանձնած հանձնառությունների,

ինչպես և արտելի անդամների կողմից իրենց պարտականությունները կատարելու և արտելի կամ նրա առանձին անդամների հասցրած վնասների համար։

2. ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ, ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Արտելի անդամ կարող են լինել յերկու սեռին պատկանող 18 տարեկանից վեր՝ դատարանի վճռով իրավունքները չսահմանափակված անձինք։

8. Արտելի անդամների՝ անձնական աշխատանքով արտելում մասնակցելը պարտադիր է։

9. Արտելի անդամների ընդունելությունը կատարվում է ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորությամբ՝ վարչության կողմից։ Արտելում ընդունվող անձնավորությունը պարտավոր է նախապես մասնակցել արտելի աշխատանքներում ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամանակի ընթացքում, բայց վոչ ավելի, քան յերեք ամիս։ Այդ ժամանակի ընթացքում արտելի անդամներն իրավունք ունեն ներկայացնել պատճառաբանված հայտարարություն՝ թեկնածուին արտելում ընդունելու դեմ։

10. Արտելի յուրաքանչյուր անդամ արտելում ընդունելու ժամանակ տալիս է արտելին հանձնառություն այն մասին, վոր ստանձնում է սույն կանոնադրությամբ սահմանված պատասխանությունը արտելի գործերի համար, և մուծում է մուտքի վճար և փայավճար, վորոնցից առաջինը սահմանվում է ..... ռուբլի, իսկ յերկրորդը ..... ռուբլի։

11. Փայը մուծվում է կամ լրիվ՝ արտելում ընդունելու ժամանակ, կամ մաս-մաս. վերջին դեպքում վճարաժամերը և վճարի չափը որոշում է ընդհանուր ժողովը։

12. Առանց ընդհանուր ժողովի, կամ նրա լիազորության՝ վարչության համաձայնության, փայը չի կարելի հանձնել ուրիշ անձի։

13. Արտելի յուրաքանչյուր անդամ կարող է հեռանալ արտելից, տալով այդ մասին գրավոր հայտարարություն վոչ վաղ քան հաշվետվության տարին լրանալուց մեկ ամիս առաջ։ Արտելից հեռանալու որը համարվում է ավյալ հաշվետվության տարվա վերջին որը։

14. Արտելի մեռած անդամի հեռանալու որը համարվում է այն հաշվետվության տարվա վերջին որը, վորի ընթացքում նա մեռել է։ Մինչև այդ ժամանակը մեռածի ստացվածքային իրավունքներն անցնում են նրա ժառանգներին, որենքով վորոշված սահմաններում։ Մեռածին պատկանող ընդհանուր ժողովներին մասնակցելու և արտելում վորևե ընտրական պաշտոն ստանձնելու իրավունքը նրա ժառանգներին չի անցնում։

15. Ընհանուր ժողովի վորոշմամբ արտելից կարող են հեռացվել նրանք, վորոնք արտելի հանդեպ, առանց հարգելի պատճառների չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունները, վորոնք գործում են արտելի կանոնադրության և նրա որինական պահանջների դեմ, կամ գործում են ընդհանրապես ի վնաս արտելին։

16 Արտելից հեռացվող անդամի հեռացման որը համարվում է ավյալ հաշվետվության տարվա վերջին որը, բայց ընդհանուր ժողովներում մասնակցելու կամ արտելում վորևե պաշտոն վարելու իրավունքներից հեռացվողը զրկվում է իր հեռացման մասին վորոշում կայացրած որից։

17. 13-րդ հոդվածի հիման վրա հեռացրած անդամը կարող է վերընդունվել միայն ընդհանուր ժողովի վորոշմամբ։

18. Արտելի յուրաքանչյուր անդամ, մեռած անդամների հետ միասին՝ արտելի հանձնառությունների համար համապատասխան պատասխանատվություն ունի։

19. Հեռացրած անդամներին կամ նրա ժառանգներին ընդհանուր ժողովի կողմից այն հաշվետվության տարվա հաշվետվությունը հաստատելուց հետո՝ վորի ընթացքում անդամը հեռացել է, յերեք ամսվա ընթացքում վերադարձվում է նրանց մուծած փայավճարը, դուրս գալով նրանց բաժին ընկնող վնասները, կամ թե ավելացնելով ոգուտից նրանց հասնող մասը։ Բայց վերոհիշյալ փայավճարներից, արտելի հեռացած անդամներն իրավունք չունեն արտելի դրամագլուխներից կամ ուրիշ ստացվածքից վորևե մաս պահանջել։

3. ԱՐՏԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Արտելն ունի հիմնական շրջանառության, պահեստի ու հատուկ դրամագլուխներ։

21. Հիմնական դրամագլուխը կազմում է մուտքի վճարներից, վորը անդամներին չի վերադարձվում։

22. Շրջանառության դրամագլուխը կազմվում է բաժնեվճարներից, փոխառություններից

և զուտ ոգուտից արած հատկացումներից, համաձայն սույն կանոնադրության.....հողված։

23. Բաժնեվճարը նշանակվում է.....ռուբլի և մուծվում է կամ միանվագ, կամ թե վորոշ ժամանակամիջոցում. վերջին դեպքում վճարների չափն ու վճարաժամերը վորոշում է ընդհանուր ժողովը կամ նրա լիազորությամբ՝ արտելի վարչությունը։

24. Արտելի հիմնական և մյուս դրամագլուխները չի կարելի բռնագրավել առանձին անդամների պարտքերի ու հանձնառությունների համար, ինչպես նաև նրանց դեմ ուղղած վարչական անվիճելի պահանջների համար։ Արտելի անդամներին չի թույլատրվում վորևե ձևով տալ իր բաժինը մեկ ուրիշին։

25. Պահեստի դրամագլուխը գոյանում է զուտ ոգուտից արված հատկացումներից այն չափով, ինչ չափով սահմանում է ընդհանուր ժողովը, բայց վոչ պակաս, քան 20 % և այն գումարներից, վորոնք գոյանում են արտելի անդամների վրա դրած տուգանքներից ու գանձումներից, նաև ընդհանուր ժողովի որամադրության տակ յեղած զանազան միջոցներից։ Պահեստի դրամագլուխը սահմանվում է վնասները ծածկելու համար և ծախսվում է ընդհանուր ժողովի վորոշմամբ։

26. Հատուկ դրամագլուխը նշանակվում է.

ա) արտելի գործի մեջ վնասված անդամներին վարձատրություն տալու.

բ) արտելի կարոտյալ անդամներին ու նրանց ընտանիքներին նպաստելու ընդհանուր ժողովի վորոշած ձևով։

27. Հատուկ դրամագլուխը գոյանում է զուտ ոգուտից արված հատկացումներից այն չափով, ինչ չափով սահմանել է ընդհանուր ժողովը, նույնպես և անդամների հատուկ մուծումներից։

28. Արտելն իր միջոցներն ուժեղացնելու համար կարող է փոխառություն կնքել և ավանդներ ընդունել ընդհանուր ժողովի վորոշած պայմաններով։

4. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

29. Թե արհեստանոցներում և թե արհեստանոցից դուրս աշխատանքների կատարելու ներքին կարգ ու կանոնը վորոշում է ընդհանուր ժողովը։

30. Արտելի յուրաքանչյուր անդամ կատարում է միայն այն աշխատանքները, վորոնք հանձնարարվում են իրեն արտելի վարչության կողմից և նա իրավունք չունի ծախելու կամ պակասեցնելու վոչ իրեն տված նյութը և վոչ էլ պատրաստի իրերը, առանց ընդհանուր ժողովի կամ վարչության հատուկ թույլտվության։

31. Այն դեպքում, յերբ արտելի անդամը բոլորովին չկատարի իրեն հանձնված աշխատանքները կամ ուշացնի նրանց կատարումը՝ պատասխանատու յե իր սեփական ստացվածքով արտելին հասցրած վնասների համար։

32. Արտելի անդամների հետ ունեցած հաշվի կարգը, նույնպես նրանց աշխատանքի գնահատումը, նրանց բաց թողած նյութերի և ստացված պատրաստի իրերի չափը սահմանում է ընդհանուր ժողովը կամ նրա լիազորությամբ՝

վարչությունը, կամ թե այդ նպատակով ընդհանուր ժողովում ընտրված հանձնաժողովը։

33. Արտելի առանձին անդամներն իրավունք չունեն ձեռք բերելու այլ հիմնարկություններից կամ անհատներից այն նյութը և իրերը որոնք արտելի պարապմունքի արտադրության առարկան են։

34. Բոլոր աշխատանքները, թե արտելի արհեստանոցներում ու գործարաններում և թե արտելի առանձին անդամների տներում, կատարվում են արտելի անդամների և նրանց ընտանիքների անձնական աշխատանքով։ Զանազան ոժանդակ աշխատանքների համար, որոնք պահանջում են առանձին մասնագիտություն, որինակ հաշվապահության, տեխնիկայի, մեքենաների հոգ տանելու և ուրիշ ասպարեզներում արտելը իրավունք ունի հրավիրելու աշխատանքի կողմնակի անձանց, բայց նրանց ընդհանուր թիվը չպիտի անցնի արտելի ամբողջ կազմի 20%-ից։

35. Արտելի առանձին անդամներն իրավունք չունեն իրենց արհեստանոցներում աշխատանքների ժամանակ ոգտվելու աշակերտների աշխատանքից այլ նպատակների համար։ Արտելը կարող է ընդունել իր ձեռնարկության մեջ որենքով սահմանված տարիք ունեցող անձանց, որպես աշակերտներ, որոնց պետք է տրվի իրավունք և ժամանակ՝ ընդհանուր կրթական դպրոցներ հաճախելու համար։ Աշակերտների նկատմամբ արտելը պարտավորվում է ղեկավարվել այդ առթիվ գոյություն ունեցող որենքներով։

5. ՎԱՍՏԱԿՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ.

36. Արտելի ընդհանուր յեկամտից հաշվետվության տարվա ընթացքում կատարված բոլոր ծախսերը դուրս գալուց հետո գոյացած գումարը համարվում է արտելի զուտ վաստակը։

37. Զուտ վաստակի վոչ պակաս, քան 20%-ը հատկացվում է հիմնական դրամագլխին և 20%-ը պահեստի դրամագլխին, իսկ մնացորդը ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ գործադրվում է ընդհանուր դրամագլուխներ ստեղծելու համար, արտելի անդամների ոգտակար ձեռնարկություն, հիմնարկություն բանալու և արտելի անդամներին պրոֆեսիոնալ կարիքների համար, կամ բաշխվում է արտելի անդամներին հավասար չափով։

38, Արտելի շրջանառությունից առաջացած մնասը ծածկում է պահեստի և հիմնական դրամագլուխներից, իսկ յեթե մնասը այդ միջոցով չի ծածկվում, ընդհանուր ժողովը կարող է այդ պակասորդ գումարը հավասար չափով պահանջել բոլոր անդամներից, նշանակելով վճարաժամ, որ տարվա վերջից չպիտի անցնի։ Զվճարելու դեպքում վարչությունը նախ նրանցից հասանելիք գումարը գանձում է նրանց պատկանող փայերից, իսկ պակասորդ գումարը գանձում է դատական կարգով։ Այն, ինչ որ հնարավոր չի լինի գանձել մի տարվա ընթացքում արտելի մեկ անդամից՝ գանձվում է մնացած անդամներից, որոնց վրա գանձելի գումարը բաժանվում է հավասար չափով։ Վարչության անդամների սխալ գործողությունների կամ նրանց անուշադրության հե-

տեսանքով առաջացած վնասը պետք է ծածկեն նրանք, լրացնելու համար այն դրամագլուխը, որից վնասը դուրս է գրված։

6. ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՄԸ

39. Արտելի գործերը վարում է ընդհանուր ժողովը և վարչությունը կամ ավագը։

Ա. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

40. Վարչությունն արտելի գործադիր մարմինն է։ Նա վարում է արտելի բոլոր գործերը և արտելի ներկայացուցիչն է բոլոր գործերում, հանձնաժողովներում և յերրորդական տարրերի և անձանց հետ ունեցած հարաբերությունների մեջ, առանց հատուկ փոխանորդագրի։

41. Մասնավորապես վարչության պարտականություններն են։

ա) Ընդհանուր ժողովի սահմանած կամ սույն կանոնադրությամբ նախատեսված բոլոր գործողությունները կատարելը։

բ) բոլոր հարցերի վերաբերյալ կանոնների և միջոցների նախագիծ կազմելը և այն ընդհանուր ժողովին՝ ի հաստատություն ներկայացնելը։

գ) Արտելի անդամների աշխատանքների ճիշտ կատարման վրա հսկելը և ընդհանուր ժողովի վորոշածի սահմաններում անդամներին տուգանելը և տուգանքը գանձելը՝ նրանց պարտադանցության դեպքում։

դ) Վարկային և այլ հիմնարկություններից, նաև մասնավոր անձերից դրամական գումարներ և արժեքավոր իրեր ստանալը, գումարներ բաց

թողնելը և արտելի պատկանող ու նրան հանձնված գումարների, արժեքավոր իրերի և ստացվածքի պահպանելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վարկային և այլ հիմնարկություններից, նաև ընթացիկ հաշիվներով դրամական գումարներ ստանալը կատարվում է՝ վարչության վոչ պակաս, քան յերկու անդամի ստորագրած պահանջագրով։

ե) Արտելի անունից դատական գործերի հարուցելը և արտելի բոլոր գործերը կառավարչական ու դատաստանական հիմնարկություններում վարելն ու պաշտպանելը, նաև յերրորդ անձանց դանազան հանձնաժողովներ տալը։

զ) Արտելի ոժանդակ աշխատանքների համար աշխատողներ վարձելը և արձակելը։

ը) Արտելի հաշիվները, գրքերը և գործավարություն վարելը, հաշվետվություն ներկայացնելը և արտելի գործերով բոլոր տեղերի և անձանց հետ կապ հաստատելը։

թ) Արտելի գործերը վարելու համար ծախսերի նախահաշիվ կազմելը։

ժ) Տարեկան տեղեկագրի կազմելը և ընդհանուր ժողովին ի հաստատություն ներկայացնելը։

ի) Սույն կանոնադրության մեջ առանձին չը նախատեսված և նրանից բղխող այլ պարտականությունների կատարելը։

42. Արտելի վարչության գործերը վարելու ներքին կարգ ու կանոնը նաև վարչության անդամների պաշտոնակատարության կարգը և նրանց լիազորության սահմանը վորոշվում է ընդհանուր ժողովի հաստատած հրահանգով։

43. Վարչությունը պարտավոր է հաշվետվության տարին վերջանալուց հետո վոչ ուշ, քան 4 ամսվա ընթացքում, հրավիրել տարեկան ընդհանուր ժողով՝ վարչության կազմած տարեկան տեղեկագիրը քննելու և հաստատելու համար։

44. Վարչության պարտազանց անդամներն իրենց ամբողջ գույքով պատասխանատու չեն վարչության առաջ՝ նրան հասցրած բոլոր վնասների համար, իսկ ընդհանուր ժողովի կողմից վարչության անդամներից մեկին հանձնարարված գործերի համար, վարչության մյուս անդամները պատասխանատու չեն։

45. Վարչությունը կազմվում է վոչ պակաս, քան յերեք անդամից, վորոնց ընտրում է ընդհանուր ժողովը արտելի անդամներից մի տարի ժամանակով։ Նույն կարգով ընտրվում են նաև յերկու փոխանդամ վարչության ժամանակավորապես բացակայող կամ հեռացվող անդամներին փոխարինելու համար։

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե արտելը ունի պակաս անդամներ, այդ դեպքում նրանց թվից ընտրվում է ավագ, վոր վարում է արտելի գործերը վարչության հետ հավասար իրավունքներով։

46. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի կազմի մեջ միաժամանակ չեն կարող մտնել մինչև 2-րդ աստիճանի ազգակցական կապ ունեցող անձինք ներառյալ։

47. Վարչության նախագահին ընտրում է ընդհանուր ժողովը կամ նրա լիազորությամբ՝ վարչությունը։ Վարչության նախագահի հիվանդության կամ բացակայության դեպքում՝ նրան փոխարինելու համար վարչությունն իր անդամներից ընտրում է տեղակալ։

48. Յեթե հաշվետվությունը հանձնվում է վարչության անդամներից մեկին, ապա վոչ մի դեպքում հաշվապահի պարտականությունները չեն կարող միացվել գանձապահի պարտականություններին։ Բացի դրանից արտելի գանձապահն իրավունք չունի միաժամանակ վարել մի վորևե ուրիշ դրամարկղի գործերը։

49. Արտելի բոլոր գործողությունները և գործարքները վարչությունը կատարում վոչ պակաս, քան վարչության անդամների թվի կեսի և նախագահի կամ նրա տեղակալի մասնակցությամբ։ Գործարքները կատարելու կանոնները, վարչության ամբողջ կազմի ստորագրությամբ փակցվում է վարչության շենքում։

50. Վարչության նիստերը տեղի յեն ունենում ամիսն առնվազը յերկու անգամ. այդ նիստերում ընդունված վորոշումները արձանագրվում են առանձին մատյանում և ստորագրվում նիստում ներկա գտնվող վարչության անդամների կողմից։

51. Վարչության անդամի հիվանդության կամ բացակայության դեպքում՝ նրա տեղը գրավում է ընտրական ավելի ձայն ստացած փոխանդամը։

52. ա) Վարչության գործերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ. ձայների հավասար լինելու դեպքում՝ նախագահի ձայնը գերակշռում է։

բ) Վարչության նիստերում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներկա լինել վարչության փոխանդամները։

53. Ընդհանուր ժողովը ժշտական ոռճիկի ձևով, կարող է վարչության անդամներին նշանակել վարձատրություն։ Նման հարցերը լուծվում են գաղտնի քվեարկությամբ։

54. Վարչության դեմ յեղած բողոքները տրվում են ընդհանուր ժողովին։

55. Վարչության անդամը կարող է հեռացվել պաշտոնից ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ վերստուգիչ հանձնաժողովը կարող է արտելի միջոցները վատնելու դեպքում ժամանակավորապես հեռացնել վարչության մեղավոր անդամին, միաժամանակ ձեռք առնելով մեջոցներ առանց ձգձգումների հրավիրելու ընդհանուր ժողով։

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

56. Ընդհանուր ժողովի գրաղմունքի առարկաներն են։

ա) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների ընտրությունը։

բ) Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամների համար հրահանգ հաստատելը, նրանց անդամներին վարձատրություն նշանակելը, ժամանակից առաջ վարչության անդամներին հեռացնելը և վարչության դեմ տրված բողոքների քննությունը։

գ) Արտելի անդամների հեռացնելը.

դ) Վարչության ներկայացրած նախահաշիվները և տեղեկագրերը քննելն ու հաստատելը, նաև ոգուտի և վնասի բախշումը։

ե) կանոնադրության կետերի փոփոխման և արտելի փակման վերաբերյալ հարցերի լուծումը։

զ) Փայերի վճարման պայմանների վորոշելը.

ը) Արտելի բոլոր աշխատանքների տարբերեղներում ներքին կարգապահության կանոնները քննելն ու հաստատելը, նաև արտելի հատուկ դրամագլուխները կազմելը և ծախսելը։

թ) Ընդհանրապես բոլոր այն հարցերի լուծումը, վորոնք վարչության իրավասությունից դուրս են։

57. Տեղեկագիրը քննելու համար վարչությունը ընդհանուր ժողով է հրավիրում ամեն տարի մայիսի 1-ից վոչ ուշ։ Բացի դրանից ընդհանուր ժողով հրավիրվում է ըստ կարիքի, վարչության վորոշմամբ, կամ վերստուգիչ հանձնաժողովի կամ արտելի սահմանված թվով անդամների պահանջը ստացվելուց յերկու շաբաթվա ընթացքում։

Այդ դեպքում՝ ընդհանուր ժողովը յերկու շաբաթվա ընթացքում հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի կողմից։

58. Արտելի անդամներին ժողովի հրավիրելու կարգը կարող է վորոշվել ընդհանուր ժողովի կողմից, բայց համենայն դեպս, պետք է առնվազը մեկ շաբաթ առաջ արտելի անդամներին տեղեկացվի ընդհանուր ժողովի որվա և տեղի մասին, նաև այդ մասին պետք է հայտարարություն

փակցրված լինի, որի մեջ ցույց տրված լինի ընդհանուր ժողովում կնքվելիք հարցերը։

59. Ընդհանուր ժողովը համարվում է կայացած, եթե ներկա են լինում ոչ պակաս, քան արտելի բոլոր անդամների թվի կեսը։ Իսկ եթե ժողովը հրավիրվում է որոշելու համար արտելի գործունեությունը դադարեցնելու կամ կանոնադրության փոփոխման վերաբերյալ հարցերը, այդ դեպքում պահանջվում է ոչ պակաս, քան արտելի բոլոր անդամների երկու երրորդ մասի ներկայությունը։

60. Եթե նշանակած օրը, անհրաժեշտ թվով անդամներ չեն հավաքվում ընդհանուր ժողովին, նրա օրակարգի հարցերը քննարկելու համար, ոչ ուշ քան մեկ ամիս հետո հրավիրվում է երկրորդ ժողովը, որը, անկախ ներկա լեզոնների թվից օրինական կը համարվի այն դեպքում, եթե ժողովը բացառապես չի հրավիրվել արտելի գործերը դադարեցնելու հարցերը վճռելու։ Վերջին դեպքում, հարցը վճռված է համարվում՝ եթե հրավիրված երկրորդ ժողովին մասնակից են լինում ընդհանուր անդամների մեկ երրորդ մասը։

61. Ընդհանուր ժողովում նախագահում է ժողովի ընտրած անձը. վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներից չեն կարող ընտրվել ժողովի նախագահ։

62. Ընդհանուր ժողովում արտելի յուրաքանչյուր անդամ վայելում է մեկ ձայնի իրավունք, որը չի կարող տրվել ուրիշին։

Վարչության կամ վերստուգիչ հանձնաժողովի կողմից հրավիրված ընդհանուր ժողովում կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել նաև այնպիսի անձինք, որոնք արտելի անդամներ չեն, ընդհանուր ժողովի թույլտվությամբ։

63. Կանոնադրության փոփոխման, անդամների պատասխանատվության չափի, ՀԱՍՆԵՐԸ արտելի անդամների վրա բաժանելու և արտելի գործերի դադարեցման վերաբերյալ որոշումները կայանալու համար պահանջվում է ընդհանուր ժողովում ներկա լեզոնների $^{2}/_{3}$-րդ ձայների մեծամասնությունը. իսկ մնացած հարցերը լուծվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում հարցը համարվում է չլուծված և տեղափոխվում է հաջորդ ընդհանուր ժողովի քննության։

64. Վարչության, վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են ընդհանուր ժողովում մյուս անդամների հետ հավասար իրավունքներով, բայց նրանց կողմից կազմված կամ գործունեությունը հաստատելու, վարձատրության չափը որոշելու և նրանց դատական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելու ժամանակ՝ առանց վճռողական ձայնի իրավունքի։

65. Ընդհանուր ժողովի որոշումները մտցվում են հատուկ մատյանի մեջ, ստորագրվում նախագահի, ներկա լեզոն վարչության անդամների և առնվազը մեկ գրագետ անդամի կողմից։ Արձանագրությանը կցվում են ընդհանուր ժողո-

վին ներկա յեղող արտելի անդամների ցուցակը։ այդ ցուցակը պետք է վավերացված լինի նախագահի և արտելի վարչության, ժողովին ներկա յեղող անդամների կողմից։ Ընդհանուր ժողովի որինական վորոշումները պարտադիր են թե ընդհանուր ժողովին ներկա յեղող և թե բացակայող անդամների համար։

66. Ընդհանուր ժողովում յուրաքանչյուր անդամ իրավունք ունի այո կամ այն հարցի լուծման առթիվ հայտնել և առանձին կարծիք և պահանջելու այն ժողնել արտելի արձանագրությունների մատյանի մեջ։

7. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

67. Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած է վոչ պակաս, քան յերեք անդամից և յերկու փոխանդամից, վորոնք ընտրվում են անդամների մեջ և մի տարի ժամանակով և չեն պատկանում արտելի վարչության կազմին։

68. Վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունները են.

ա) Ըստ կարիքի, բայց վոչ պակաս քան տարին մի անգամ, կատարել արտելի գույքի դրաժարկի, տարեկան հաշվետվության և ընդհանրապես արտելի գործունեության մանրամասն վերստուգումներ.

բ) Թե ամբողջ տարվա ընթացքում կատարած վերստուգումների և թե տարեկան տեղեկագրի մասին իրեն յեզրակացությունները ընդհանուր ժողովին ներկայացնելը։

69. Վերստուգիչ հանձնաժողովի վրա յեղած բոլոր գործերը հանձնվում են ընդհանուր ժողովին, բայց վոչ այլ կերպ, բայց յեթե նույն հանձնաժողովի միջոցով, վորը պարտավոր է արձանագրություններն իր բացատրության հետ միասին ներկայացնել առաջիկա ընդհանուր ժողովին։

8. ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՄԱՐՈՒԹՅՈՒՆ

70. Արտելում անպայման պահվում են մատյաններ, վորտեղ մուծվում են.

ա) Արտելի շրջանառությունների ընդհանուր մուտքը և յելքը և դրամարկղում յեղած կանխիկ դրամը։

բ) Արտելի առանձին շրջանառությունների մուտքը և յելքը.

գ) Արտելի յուրաքանչյուր առանձին անձի հետ ունեցած հաշիվները։

71. Արտելի հաշվետվության տարին համարվում է հունվարի 1-ից մինչև 31-ը դեկտեմբերի։ Յեթե արտելը իր գործունեությունը ըսկսել է տարվա ընթացքում, ապա առաջին հաշվետվության տարին համարվում է նրա բացման որից մինչև նույն տարվա դեկտեմբերի 31-ը։

72. Նախ քան ընդհանուր ժողովին ներկայացնելը տեղեկագիրը մատյանների և փաստաթղթերի հետ ստուգվում են վերստուգիչ հանձնաժողովի կողմից, վորը իր յեզրակացության հետ միասին ներկայացնում է այն, հերթական ընդհանուր ժողովին։

73. Տարեկան տեղեկագիրը պետք է ամփոփի իր մեջ արտելի գործունեության վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տվյալները, մասնավորապես հաշվեկշիռը, ոգուտի և վնասի հաշիվները, արտելի հանձնառությունների համար պատասխանատվություն ունեցող և մյուս անդամների ընդհանուր թվի փոփոխման մասին տեղեկություն, նաև տարվա ընթացքում արտելի շրջանառությունների մուտքը, ելքը և մնացորդները և այդ շրջանառությունների մասին առանձին-առանձին տեղեկություններ։

74. Տարեկան տեղեկագիրը պետք է կազմվի և ստորագրվի վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի կողմից, վոչ ուշ, քան մինչև ընդհանուր ժողովի գումարվելուց յերկու շաբաթ առաջ, վորին պետք է ներկայացվի տեղեկագիրը։ Այդ յերկու շաբաթվա ընթացքում տեղեկագիրը պետք է վորոշ ժամեր բաց լինի անդամների համար ծանոթանալու նպատակով։

75. Սահմանված ժամանակամիջոցում, յեթե վարչության կողմից հաշվետվությունը չի կազմվել, այն դեպքում, վերստուգիչ հանձնաժողովը, ի հաշիվ վարչության անդամների պարտավոր է նրա կազմելը հանձնել մեկ ուրիշի։

76. Ընդհանուր ժողովի հաստատած տեղեկագիրը պահվում է արտելի գործերում։

77. Արտելի գործավարությունը և հաշվապահությունը կատարվում է հայերեն լեզվով։

78. Արտելի լուծարքը կատարվում է ԽՍՀՄ Կենդգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1927 թ. հունվարի 15-ին հաստատված «Կոոպերատիվ

կազմակերպությունների լիկվիդացիայի, միացման և բաժանման դեպքում նրանց դադարման կարգի կանոնադրության» հիման վրա (ԽՍՀՄ Ո. Ժ. Կ. 1927 թ. № 37, հոդվ. 371)։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՅԵՎ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

79. Արտելի անդամների ընդհանուր ժողովը, համաձայն սույն կանոնադրության 53 րդ հոդվածի, կարող է փոփոխության յենթարկել և լրացնել սույն կանոնադրությունը։

80. Արտելի վարչությունը կանոնադրության մեջ կատարված բոլոր փոփոխությունների մասին պարտավոր է անմիջապես տեղեկացնել Ժողկոմխորհին և միայն վերջինիս հաստատելուց հետո՝ նրանք ստանում են որինական ուժ։